Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2022 թ. հոկտեմբերի 1-ից 2022 թ. դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակաշրջանում կատարել եմ հետևյալ աշխատանքները՝

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեին և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը՝ դիտողություններ և առաջարկություններ է ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիր-3», «Արմավիր-4», ՀՀ Շիրակի մարզի «Շիրակ-3», «Շիրակ-9», «Շիրակ-10», «Շիրակ-11», ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գեղարքունիք-1», «Գեղարքունիք-2», «Գեղարքունիք-5», «Գեղարքունիք-7», Սյունիքի մարզի «Սյունիք-5» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի փաթեթների, ինչպես նաև դրանց լրամշակված օրինակների նախնական գնահատման հայտի վերաբերյալ:

2. Տեղեկություններ կապված քրեական վարույթի հարցումներին՝ ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով բնակավայրի տարածքում գտնվող Պարիս Հերունու Ռադիոֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի Արագածի գիտական կենտրոն նորահայտ հուշարձան համալիրի տարածքում առկա հուշարձանների վերաբերյալ՝ ՀՀ Արագածոտնի մարզային քննչական վարչությանը և ՀՀ պետական վերահսկողության ծառայությանը:

3. Կարծիք է տրվել ՀՀ տարբեր մարզերի թվով 4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը մշակելու նպատակով տվյալներ ներկայացնելու վերաբերյալ:

4. Փոփոխություններ են կատարվել գլխավոր հատակագծերում՝ Երևան քաղաքի Աճառյան փողոց, Ղափանցյան և Արտաշիսյան փողոցներ, Կենտրոնի Վերին Անտառային փողոց, Դավթաշեն թաղամաս, Աշտարակ և Սևան քաղաքներում, ևս Կոտայքի մարզի 2 գյուղական համայնքներում, ինչպես նաև բնակելի շինությունների իրականացման և դրանց հետ առնչվող տեղեկատվությունների տրամադրում դիմողներին:

5. Պատասխաններ են ներկայացվել քաղաքացիների դիմումներին՝ հուշարձանների պահպանական գոտիներում և հուշարձանների հարակից տարածքներում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունների վերաբերյալ՝ թվով 4 համայնքներ :

6. Իրականացվել են տարբեր նպատակային նշանակության հողակտորների կատեգորիայի փոփոխություններ հիմնականում հասարակական կառուցապատման և բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրների կառուցապատման նպատակով՝ Երևան, Աշտարակ, Աբովյան, Ծաղկաձոր, Սևան քաղաքներում, Թումանյանի Դսեղ համայնքում և

ներդրումային ծրագիր ՀՀ Թալին խոշորացված համայնքի տարածքում՝ Դաշտադեմի ամրոցի հարևանությամբ:

7. Համայնքների ղեկավարների համաձայնեցմանն է ներկայացվել պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիների նախագծերը և տեղեկատվություն է տրվել դրանց հաշվառման փաստացի առկայության վերաբերյալ:

8. Եզրակացություններ են տրվել տարբեր ընկերությունների կողմից փորձաքննության ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտի վերաբերյալ (ք. Երևան, Շիրակի մարզ, Կոտայքի մարզ, Արագածոտնի մարզ, Սյունիքի մարզ, Արմավիրի մարզ):

Հուշարձանների ու պատմական միջավայրի
պահպանության և օգտագործման բաժնի փորձագետ՝ Կատյա Բարսեղյան

18. 12.2022 թ.